ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՕՆ

Հայաստան ժողովրդավար պետութիւն մըն է, մշակութային հարուստ ժառանգութեամբ: Աշխարհի ամենահին քաղաքակրթութիւններէն մէկուն ժառանգորդն է եւ սակայն ներկայ տարածքը Պատմական Հայաստանի մէկ փոքր մասն է միայն:

21 Սեպտեմբեր 1991-ին համաժողովրդական հանրաքուէով, Հայաստան կը վերանկախանայ: Հայաստանի բնակչութեան 99%-ը «Այո» կ՚ըսէ անկախութեան, հռչակելով Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը:

- 21 Սեպտեմբերը կը նշուի իբրեւ Ազգային Տօն:
- ՀՀ պետական լեզուն հայերէնն է, իսկ գիրը՝ 5-րդ դարասկիզբին Մեսրոպ Մաշտոցի ստեղծած հայոց Այբուբենը:
- ՀՀ պետական կրօնքը քրիստոնէութիւնն է («Հայ Առաքելական Եկեղեցի»-ն 301 թուականէն ի վեր): Հայաստան առաջին երկիրն է որ ընդունեց քրիստոնէութիւնը իբրեւ պետական կրօն:

ՄԵՐ ԵՌԱԳՈՅՆ ԴՐՕՇՆ ՈՒ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Հայաստանի Ազգային Դրօշը

Հորիզոնական կարմիր, կապոյտ եւ նարնջագոյնով հաստատուելու ժամանակ դրօշին ձեւին եւ գոյներուն շուրջ եղան բաւական երկար խորհրդակցութիւններ: Նկատի առնուեցան հայոց պատմութեան դրօշները եւ ի վերջոյ որոշուեցաւ ընդունիլ վերոյիշեալ երեք գոյները:

Այդ գոյները կարծես մեր կեանքէն կը բխէին եւ հայ պետականութեան ծագումն ու ապագան կը խորհրդանշէին: Կարմիրը հայ ժողովուրդի թափած արիւնն էր, կապոյտը՝ Հայաստանի կապոյտ երկինքը, իսկ նարինջի կամ ոսկիի գոյնը՝ խտացումը աշխատանքին: Հայ ժողովուրդը, որ արիւնով ձեռք բերած էր իր ազատութիւնը հայրենիքի կապոյտ երկինքին տակ իր համբաւաւոր աշխատասիրութեամբ երկիրը պիտի վերաշինէր եւ ազատ ու երջանիկ ապրէր:

Հայաստանի Հանրապետութեան Զինանշանը

1920 Յուլիսին, Հայաստանի կառավարութիւնը հաստատեց ակադեմիկոս Ալեքսանտր Թամանեանի կազմած եւ նկարիչ Կոջոյեանի գծած Հայաստանի պետական զինանշանը: Զինանշանի կեդրոնը զետեղուած էր վահանաձեւ տարածութիւն՝ բաժնուած չորս մասի, իւրաքանչիւր մասին մէջ տեղադրուած է Պատմական Հայաստանի չորս անկախ շրջաններէն մէկուն զինանշանը՝ Արտաշէսեան, Արշակունեան, Բագրատունեան եւ Ռուբինեան:

Կեդրոնը դրուած է Մեծ ու Փոքր Մասիսները եւ անոնց վերեւ՝ ՀՀ տառերը: Վահանի աջ ու ձախ կողմերը բռնած են արծիւ մը, իսկ ներքեւը՝ սուր, գրիչ, հասկեր եւ շղթայ:

Թիւը պատրաստեց՝ Մարմանդ Աշոտեան-Ղահինեան
Նկարազարդեց՝ Ռաֆֆի Քէշիշեան

Թիւերը միացնելով ամբողջացո՛ւր պատկերը:



Ամբողջացո՛ւր օձին մարմինին վրայ գտնուող թիւերը:



Իւրաքանչիւր փոքրիկերբ մեծնայ ի՞նչ կ՛ուզէ դառնալ:
Ճիշդ ճամբաները գտնելով գիտցի՛ր պատասխանները:



ՀԱՆԵԼՈՒԿ

Բռունցքի չափ մեքենայ է,

Ամէն տեղ մեզի հետ է,

Ըլլանք արթուն թէ քնացած,

Ան մեզի միշտ կեանք պարգեւած է:

տվվՈ :ղոովոոտոպ

Բանաստեղծութիւն

ՄԵՆՔ...

Ժաղ Յակոբեան

Մե՛նք...-Մենք՝ բո՛ւռ մը հող աշխարհի վրան՝
Ժայռի պէս հաստա՛տ, դաշտի պէս յուռթի՛,
Մենք՝ դարաւոր թի՛ւ բազկի արութեան,
Մենք՝ սիրտի անդո՛ւնդ եւ բարձո՛ւնք միտքի.
Մենք՝ մասիսաձիգ Հայկի՛ սեգ ճակատ
Եւ անխախտ կամքի անյա՛ղթ Արարատ...

Մենք՝ գի՛ւտ Մեսրոպի... Մենք՝ քնա՛ր լեզու,
Ուր կը վիպերգէ Հոգի՛ն Հայկական.
Սայաթ - Նովայի մենք սա՛զ սիրածու.
Մենք՝ խորախորհուրդ Նարեկի՛ խորան.
Դարերէն հոսող մենք երգի՛ Արաքս,
Ուր կը գլգլայ գինին Կոմիտաս...

Մենք՝ վարդանայա՛ղթ Աւարայրամարտ,
Մեր ձեռքին մէջ զէ՛նք եւ խա՛չ՝ մեր հոգւոյն.
Մենք՝ Էջմիածնի հաւա՛տք ժայռարմատ,
Ուր փուլ կը փշրի ծովը դարերուն.
Մենք՝ աշխարհասփիւռ Ա՛ստղ Լուսաւորչի,
Որուն դէմ խաւարն ի զո՛ւր կը բախի:

Այս ամբո՛ղջն ենք մենք...Ու դե՛ռ՝ հերոսի
Եւ մարտիրոսի անմա՛շ Պատմութիւն,
Շուշա՛ն Սրբութիւն, Մշակո՛յթ ոսկի,
Որոնց էջերն են փորուած ժայռերուն
Եւ արեա՛մբ գրուած... Մենք լոյսի՛ ժառանգ
Եւ մութ դարերուն յոյսի՛ հրիտակ...

Եւ մենք, վա՛ղը, մենք՝ յաղթութեա՛ն բոմբիւն,
Յաղթ ու բամբ կոփի՛ւն կուռ հողին վրայ մեր,
Մենք՝ Նաւասարդի առաւօ՛տ ծիծղուն,
Մենք՝ ռմբեղ հեռով հըրաբխա՛ծ Մհեր
Եւ շղթայազեղծ ծարա՛ւ Արտաւազդ.
Մենք՝ պատեանէն դուրս սրածո՛ղ Եփրատ,
Մենք՝ աշխարհակալ անկա՛խ Արարատ...

ԵԼԱԿ

Բաց վարդագոյնէն մինչեւ մուգ վարդագոյն հիւթալի հատապտուղ է Ելակը: Հարուստ է կենսանիւթերով, թթուներով եւ շաքարներով: Ան Հայաստանի գրեթէ բոլոր մարզերուն մէջ կը մշակուի:

<u>Ելակին Օգուտները:</u>

Ելակը ընդունակ է դանդաղեցնելու ծերացման ընթացքը: Անոր համար ալ ճաշէն նուազագոյնը 40 վայրկեան ետք անհրաժեշտ է քանի մը հատ ելակ ուտել:

Ելակը նաեւ ատամները կը ճերմկցնէ: Ան մեծ քանակով կենսանիւթ C կը պարունակէ, որ կ՝օգնէ պայքարելու այն երեւոյթներուն դէմ, որոնց պատճառով ակռաներուն գոյնը մուգ կը դառնայ:

Ելակը կը լաւացնէ տեսողութիւնը: Ելակին կազմութեան մէջ մտնող նիւթերը, ինչպէս՝ կենսանիւթ C-ն եւ օրկանական թթուները, կ՝օգնեն ազատելու զանազան հիւանդութիւններէն: Իսկ ելակէն պատրաստուած դիմակը կ՝օգտագործուի ձերբազատելու աչքերուն ստորին կոպերուն ուռեցքներէն: